ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ



2005 թվականի դեկտեմբերի 17-ին վախճանվեց հայ սեպագրագիտության վաստակաշատ դեմքերից մեկը՝ Հովհաննես Կարագյոզյանը:

Հովհաննես Կարագյոզյանը ծնվել է 1928թ. մայիսի 24-ին Աբխազիայի Սուխումի շրջանի Կամանի գյուղում: Մանկությունն ու պատանեկությունն անցկացրել է Աբխազիայում: 1951-1956 թթ. Ուսանել է Երևանի պետական համալսարանում՝ ստանալով բանասեր-արևելագետի որակավորում: Այնուհետև ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի ասպիրանտուրա, գործուղվել Լենինգրադ՝ ասուրերենի և ուրարտերենի մեջ մասնաիտանալու:

1962 թվականից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ պատմության, իսկ 1971-ից՝ Արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնում:

Հ. Կարագյոզյանն իր գիտական կյանքի առանցքն է դարձրել Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների ուսումնասիրությունը: Նա հեղինակել է մի քանի տասնյակ գիտական բարձրարժեք աշխատություններ, որոնք նախատեսում էր ամփոփել «Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում. սեպագիր տեղանուններ» եռահատոր աշխատության մեջ: 1998 թ. լույս տեսավ աշխատության առաջին հատորը՝ «Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում)»: Երկրորդ հատորը՝ «Սեպագիր տեղանուններ (Տուրուբերանում և հարակից նահանգներում)», հեղինակը ավարտել և պատրաստել էր հրատարակության: Երրորդ հատորը՝ «Սեպագիր տեղանուններ (Վասպուրականում և հարակից նահանգներում)», ցավոք, մնաց որպես երջանկահիշատակ գիտնականի չիրականացած մտահղացում:

Հ. Կարագյոզյանը կատարել է մի շարք թարգմանություններ. նշանակալի է «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» առաջին հատորում (Երևան, 1981) Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների բաժնի շարադրանքը նրա կողմից: Նա զբաղվել է դասախոսական արդյունավետ գործունեությամբ. 1961 թվականից Վանի թագավորության սեպագրության հատուկ դասընթաց էր վարում ԵՊՀ պատմության ֆակուլտետում: Հ. Կարագյոզյանը աշխատել է «Երևանի համալսարան» թերթի խմբագրությունում, եղել է ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի պատասխանատու քարտուղարը և ի հայտ բերել մտավորական-լրագրողի իր ակնառու շնորհներն ու ուսումնասիրողի բարեխղճությունը: Բարի և ներողամիտ էր իր շրջապատի, մերձավորների ու հեռավոր մարդկանց նկատմամբ, մանավանդ, եթե հայտնաբերեր որևէ մեկի մեջ դյուզն-ինչ ստեղծագործողի, որոնող մտքի հատկանիշներ: Եվ խստապահանջ՝ իր անձի հանդեպ, որի շնորհիվ գործ ունեինք, իրոք, հայ սեպագրագիտության ներհուն մի այնպիսի հեղինակության և իմացականությամբ առլեցուն մասնագետի հետ, որպիսին ինքն էր:

Հանձին Հովհաննես Կարագյոզյանի՝ հայ արևելագիտությունը կորցրեց իսկական մտավորականի, որի անունը կմնա գիտության մեջ և սիրելի՝ բոլորիս սրտերում:

ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Խմբագրության կողմից

Հանդեսի խմբագրության աշխատակազմը և խմբագրական խորհուրդը սգում են Հ. Կարագյոզյանի մահը և վշտակցում վաստակավոր գիտնականի հարազատներին ու մերձավորներին: